ՀՀ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՏԻԱՐ ԱՐՄԷՆ ԱՇՈՏԵԱՆԻ ԽՕՍՔԸ ԳԷՈՐԳԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 140-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(12 հոկտեմբերի, 2014 թ.)

Ընդունէ՛ք իմ շնորհաւորանքներն ու բարեմաղթանքները Գէորգեան հոգեւոր ճեմարանի հիմնադրման 140-ամեայ յոբելեանի կապակցութեամբ:

Այս նշանակալի իրադարձութիւնը տօն է ինչպէս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանութեան, բոլոր ժամանակների ճեմարանականների, այնպէս եւ ողջ հայութեան համար, քանի որ Գէորգեան հոգեւոր ճեմարանն է անդրանիկը հայրենիքում գործող բարձրագոյն ուսումնական հաստատութիւնների: Այս ճեմարանի շրջանաւարտներն էին, որ Ի. դարասկզբին եղան հայութեան դէմքը ժամանակի գերմանական աշխարհահռչակ համալսարաններում:

Գէորգեան հոգեւոր ճեմարանի նախկին ուսանողներն ու դասախօսները որոշիչ դեր խաղացին Հայաստանի համալսարանի (հետագայում ԵՊՀ) ստեղծման գործում: Ճեմարանի գրադարանի եզակի եւ հարուստ հաւաքածուն (45 հազար կտոր գիրք) դարձել է Ազգային գրադարանի եւ Մատենադարանի հիմնարար ֆօնդերից:

Գէորգեան հոգեւոր ճեմարանը, հիմնադրուելով մեր պետականութեան բացակայութեան պայմաններում, դարձաւ լուսէ փարոս, յոյսի մի շող հայ ժողովրդի գոյութեան խաւար ճանապարհներին: Այստեղից ծնուեցին ժամանակի գրեթէ բոլոր առաջամարտիկները ամենատարբեր ասպարէզներում: Լուսաւորչի հիմնած Աթոռից ծնուեցին նոր լուսաւորիչներ, որոնք, յիրաւի, իրենց տեղը զբաղեցրին մեր մեծերի համաստեղութեան մէջ:

Անգնահատելի է Գէորգեան հոգեւոր ճեմարանի աւանդը հայրենի գրականութեան, գիտութեան, հասարակական-քաղաքական մտքի, մանկավարժութեան զարգացման բնագաւառում: Այստեղ են սովորել գրողներ Ա. Ահարոնեանը, Ա. Բակունցը, Դ. Դէմիրճեանը, Ա. Իսահակեանը, Լ. Շանթը եւ ուրիշներ, հայագէտներից՝ Մ. Աբեղեանը, Ա. Աբրահամեանը, Ն. Ադոնցը, Ն. Ադբալեանը, Թ. Ադալբէգեանը, Ա. Ջամինեանը, Խ. Կանայեանը, Ս. Մալխասեանցը, Ա. Տէրտէրեանը, երաժշտագէտներից՝ Ա. Բրուտեանը, Կոմիտասը, Ա. Շահմուրադեանը, մանկավարժներից՝ Կ. Աբովեանը, Բ. Բա-

հաթրեանը, Գ. Էդիլեանը, Սիմակը, հասարակական-պետական գործիչներից՝ Ա. Դարբինեանը, Ա. Գիւլխանդանեանը, Գ. Խաժակը, Ա. Միկոյեանը, Ա. Մռաւեանը, Ս. Վրացեանը, Հ. Տէր-Յակոբեանը (Իրազեկ):

Սկսած 1945-ի նոյեմբերի 1-ից՝ Գէորգ Զ. Չէորեքչեան Կաթողիկոսի ջանքերով Ճեմարանը վերաբացուեց եւ աւելի համեստ շրջանակներում շարունակեց իր նախկին աւանդոյթները:

Ուրախութեամբ պէտք է արձանագրել, որ Ճեմարանն այսօր եւս շարունակում է մնալ իր բարձունքի վրայ: Թէեւ քաղաքական ու ռազմական անբարենպաստ պայմաններից դրդուած՝ Գէորգ Ե. Սուրէնեանց Կաթողիկոսի որոշմամբ 1917-ից Ճեմարանն առժամանակ դադարեցրեց իր գործունէութիւնը, սակայն հարիւրամեայ իր կեանքի ընթացքում Գէորգեան ճեմարանը համայն հայութեանը հասցրեց տալ լուսաւոր մտաւորականների այնպիսի մի բոյլ, որպիսին նոյն ժամանակահատուածում աշխարհի որեւէ այլ բուհ չի կարողացել ծնել:

Այս ամէնը եւ Ճեմարանի նոր ուսումնական ծրագրերի որակը հաշուի առնելով՝ ՀՀ կառավարութեան որոշմամբ ՀՀ ԿԳ նախարարութիւնը 2002 թ. Գէորգեան հոգեւոր ճեմարանին շնորհեց բարձրագոյն ուսումնական հաստատութեան կարգավիճակ՝ որպէս աստուածաբանական համալսարան: Այսօր Ճեմարանը միակ աստուածաբանական համալսարանն է Հայաստանեայց Սուրբ Եկեղեցու եւ ՀՀ համար:

Մէկ անգամ եւս շնորհաւորում եմ բոլորիս յոբելեանի առթիւ: Բոլոր ճեմարանականներին մաղթում եմ աշխատանքային նորանոր յաջողութիւններ ու ձեռքբերումներ՝ ի նպաստ մեր երկրի բարեկեցութեան ու հզօրացման: